ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/24

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝

«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝

Ս. Դեմիրճյանի (Լիազորագիր, տրված՝ 04.02.2019թ.)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.01.2019թ. թիվ 27/26-3/1293-19 գրությամբ «Էսկուլապ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 23.01.2019թ. թիվ 022/25 գրության հիման վրա, 31.01.2019թ. թիվ 27/26-3/1293-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Էսկուլապ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Էսկուլապ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Էսկուլապ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «Թ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂԱՏՈՒՆ-2019» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 14.12.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Էսկուլապ» ՍՊԸ-ն և մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.12.2018թ. հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից 08.01.2019թ. տրվել է եզրակացություն, համաձայն որի «Էսկուլապ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /14.12.2018թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ 837 682 ՀՀ դրամի չափով:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի «Էսկուլապ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի

շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն նշվել է, «Էսկուլապ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է ՀՀ ՊԵԿ-ի կողմից 08.01.2019թ. տրամադրված եզրակացության հիման վրա, համաձայն որի «Էսկուլապ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /14.12.2018թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ 837 682 ՀՀ դրամի չափով:

Ընկերությունը հայտնել է, որ «Էսկուլապ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով 837 682 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է հայտը ներկայացնելու օրվանից՝ 14.12.2018թ. հետո, այն է՝ 21.12.2018թ. ՀՀ ՊԵԿ-ի կողմից Ընկերության ԱՀՔ-ում վերահաշվարկ կատարելու և պարտավորությունները Հարկային օրենսգրքով սահմանված դրույթներին համապատասխանեցվելու հետևանքով, որի արդյունքում «Էսկուլապ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 14.12.2018թ. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով առաջացել է 837 682 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որն էլ արձանագրվել է «Թ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂԱՏՈՒՆ-2019» ծածկագրով Ընթացակարգի շրջանակներում ՊԵԿ-ի կողմից 08.01.2019թ. (այսինքն՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից 21.12.2018թ. Ընկերության ԱՀՔ-ում փոփոխություններ կատարելուց հետո) տրված եզրակացությամբ:

Քանի որ «Էսկուլապ» ՍՊԸ-ն 14.12.2018թ., այսինքն հայտ ներկայացնելու օրը, որևէ հարկային պարտավորություն չի ունեցել և ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրված հարկային պարտավորության մասին տեղեկացվել է Պատվիրատուից նշված Ընթացակարգի շրջանակներում, ուստի Ընկերությունը 24.12.2018թ. այս խնդրի կապակցությամբ հարցում է կատարել ՀՀ ՊԵԿ /կցվում է/:

Ի պատասխան վերոնշված հարցմանը՝ ՀՀ ՊԵԿ-ը 16.01.2019թ. պատասխանել է հետևյալը՝

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊԵԿ հարկային մարմնի պարտավորությունների մարման և անձնական հաշվի քարտի վարման էլեկտրոնային համակարգը ներդրվել է 2018թ. և ըստ անհրաժեշտության համակարգում կատարվում են փոփոխություններ:

2018թ.-ի հոկտեմբերի 28-ի դրությամբ ծրագրային խնդրով պայմանավորված «Էսկուլապ» ՍՊԸ-ի ԱՀՔ-ում եղել են անճշտություններ, այդ պատճառով ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնի կողմից տրամադրված «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքում պարտավորություններ առկա չեն: 2018թ.-ի դեկտեմբերի 21-ին կազմակերպության ԱՀՔ-ում կատարվել է վերահաշվարկ և պարտավորությունները համապատասխանեցվել են Հարկային օրենսգրքով սահմանված դրույթներին» /գրության պատճեն կցվում է/:

24.12.2018թ. «Էսկուլապ» ՍՊԸ-ն կրկին հարցում է ներկայացրել ՀՀ ՊԵԿ /գրության պատճեն կցվում է/, որով խնդրել է պարզաբանել հետևյալ հարցերը.

1. 14.12.2018թ. դրությամբ «Էսկուլապ» ՍՊԸ-ի մոտ առկա 820 838 ՀՀ դրամ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը արդյոք առաջացել է Ձեր 18.01.2019թ. թիվ 6-2/3314-19 գրությամբ մատնանշված 2018թ. դեկտեմբերի 21-ին վերահաշվարկ կատարելու և Հարկային օրենսգրքով սահմանված դրույթներին պարտավորությունները համապատասխանեցվելու արդյունքում:

2. Եթե ՀՀ ՊԵԿ-ի կողմից 2018թ. դեկտեմբերի 21-ին վերահաշվարկ կատարելու արդյունքում Ընկերության անձնական հաշվի քարտում ժամկետանց հարկային պարտավորությունը հաշվարկվել է 2018թ. դեկտեմբերի 21-ից հետո, ապա արդյոք նշված 820 838 ՀՀ դրամ պարտավորությունը «Էսկուլապ» ՍՊԸ-ի համար կարող էր տեսանելի լինել 14.12.2018թ.:

3. Մինչև Ձեր 18.01.2019թ. թիվ 6-2/3314-19 գրությամբ մատնանշված 2018թ. դեկտեմբերի 21-ին վերահաշվարկ կատարելը արդյոք «Էսկուլապ» ՍՊԸ-ի մոտ 14.12.2018թ. դրությամբ առկա է եղել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ:

Ի պատասխան վերոնշված հարցմանը ՀՀ ՊԵԿ-ը 02.02.2019թ. թիվ 6-2/7331-19 գրությամբ /գրության պատճեն կցվում է/ պատասխանել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊԵԿ Հարկային մարմնի պարտավորությունների մարման և անձնական հաշվի քարտի վարման էլեկտրոնային համակարգը ներդրվել է 2018թ. և ըստ անհրաժեշտության համակարգում կատարվում են փոփոխություններ:

Տեղեկացնեմ, որ ՊԵԿ-ում առկա տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ԳՀՇՁԲ-2018/2-ԵՊԲՀ գնման ընթացակարգերի ծրագրով ներկայացված հարցման պատասխանի համաձայն՝ գնման հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (12.12.2018թ.) «Էսկուլապ» ՍՊԸ-ի մոտ պարտավորություններ առկա չեն եղել, իսկ 12.12.2018թ. մինչև 14.12.2018թ. ընկած ժամանակահատվածում կազմակերպության կողմից պարտավորություններ առաջացնող հաշվարկ-հաշվետվություններ չեն ներկայացվել:

Ծրագրային խնդրով պայմանավորված՝ «Էսկուլապ» ՍՊԸ-ի ԱՀՔ-ում եղել են անճշտություններ և 2018թ. դեկտեմբերի 21-ին կազմակերպության ԱՀՔ-ում կատարվել են վերահաշվարկ և պարտավորությունները համապատասխանեցվել են Հարկային օրենսգքրով սահմանված դրույթներին, հետևաբար 14.12.2018թ. դրությամբ վերահաշվարկի արդյուքները կազմալերպությանը չէր կարող տեսանելի լինել»:

Այսպիսով, «Էսկուլապ» ՍՊԸ-ն 14.12.2018թ. հայտ ներկայացնելով «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «Թ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂԱՏՈՒՆ-2019» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին՝ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել և չէր կարող տեղյակ լինել նման պարտավորության մասին, քանի որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրված 837 682 ՀՀ դրամի հարկային պարտավորությունը առաջացել է դեկտեմբերի 21-ից հետո՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից կազմակերպության ԱՀՔ-ում կատարված վերահաշվարկների և պարտավորությունները Հարկային օրենսգրքով սահմանված դրույթներին համապատասխանեցնելուց հետո, և նշված պարտքը, ըստ ՀՀ ՊԵԿ 02.02.2019թ. թիվ 6-2/7331-19 գրության՝ 14.12.2018թ. տեսանելի չէր կարող լինել Ընկերության համար:

Արդյունքում, «Էսկուլապ» ՍՊԸ-ին վերագրվել է վերահսկվող եկամուտների գծով այնպիսի ժամկետանց հարկային պարտավորություններ, որոնք դեռևս հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ /14.12.2018թ./ գոյություն չի ունեցել և Ընկերությունը կարող էր տեղեկացվել այդ հարկային պարտավորության մասին՝ միայն դեկտեմբերի 21-ից հետո, ինչը փաստվում է նաև ՀՀ ՊԵԿ-ի վկայակոչված գրությամբ:

Նման պայմաններում Ընկերությունը գտնում է, որ «Էսկուլապ» ՍՊԸ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում:

Ընկերությունը հայտնել է, որ նմանատիպ փաստական հանգամանքներում 01.11.2018թ. կայացված թիվ ՍՑ-ԱՄ-2018/148 որոշմամբ արձանագրվել է, որ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՍՊԸ-ի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրույթամբ արձանագրված ժամկետանց հարկային պարտավորությունը փաստացի առաջացել է Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրից հետո, հետևաբար Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ.Անանյանը գտել է, որ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՍՊԸ-ի կողմից թույլ չի տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ.Անանյանին խնդրել է նկատի ունենալ, որ «Էսկուլապ» ՍՊԸ-ի կողմից իրականում եղել է հայտը ներկայացնելու օրվա դրույթամբ արձանագրված հարկային պարտավորության վերաբերյալ տեղեկացված չլինելու հանգամանքը: Այսպես, ՀՀ ՊԵԿ 02.02.2019թ. թիվ 6-2/7331-19 գրության համաձայն՝ 12.12.2018թ. «Էսկուլապ» ՍՊԸ-ի մոտ պարտավորություններ առկա չեն եղել, մինչդեռ ՀՀ ՊԵԿ 21.01.2018թ. տրված թիվ 328 տեղեկանքի համաձայն՝ 12.12.2018թ. «Էսկուլապ» ՍՊԸ-ի մոտ առկա է նույն 837 682 ՀՀ դրամի հարկային պարտավորությունը:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Ընկերությունը խնդրել է «Էսկուլապ» ՍՊԸ-ին չվերագրել ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Էսկուլապ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/24 ընթացակարգի շրջանակներում 05.02.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.01.2019թ. թիվ 022/25 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով 07.12.2018թ. հայտարարվել է «ԹՀ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂԱՏՈՒՆ-2019» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: 18.12.2018թ. բոլոր մասնակից ընկերություններին Պատվիրատուի կողմից ծանուցվել է դեկտեմբերի 21-ին մասնակցելու բանակցային գործընթացին՝ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ մասի պահանջի:

26.12.2018թ. առաջին տեղ զբաղեցնող մասնակիցները Պատվիրատուի կողմից ծանուցվել են, որպեսզի երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 09.01.2019թ. ներառյալ ներկայացնեն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը: Նույն օրը 26.12.2018թ. հարցում է ուղարկվել Պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար: 08.01.2019թ. կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությամբ «Էսկուլապ» ՍՊԸ-ն ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող հարկային պարտավորություն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/24 ընթացակարգի շրջանակներում 05.02.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2019/24 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2019/24 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «Թ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂԱՏՈՒՆ-2019» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 14.12.2018թ. հայտ է ներկայացրել «Էսկուլապ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.12.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության կայացված որոշմամբ «Էսկուլապ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 2-րդ, 4-րդ, 10-րդ, 13-րդ, 22-րդ, 29-րդ, 31-33-րդ, 36-38-րդ, 40-41-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 08.01.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Էսկուլապ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 837 682 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.01.2019թ. թիվ 27/26-3/1293-19 գրությունը, «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 23.01.2019թ. թիվ 022/25 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 02.02.2019թ. թիվ 6-2/7331-19 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե '

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման

չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում

հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «Թ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂԱՏՈՒՆ-2019» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 14.12.2018թ. հայտ է ներկայացրել «Էսկուլապ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.12.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության կայացված որոշմամբ «Էսկուլապ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 2-րդ, 4-րդ, 10-րդ, 13-րդ, 22-րդ, 29-րդ, 31-33-րդ, 36-38-րդ, 40-41-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 08.01.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Էսկուլապ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 837 682 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.01.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Էսկուլապ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 837 682 դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 02.02.2019թ. թիվ 6-2/7331-19 գրությունը, որով ամրագրվել է հետևալը.

«ՀՀ ՊԵԿ հարկային մարմնի պարտավորությունների մարման հաշվի քարտի վարման էլեկտրոնային համակարգը ներդրվել է 2018թ. և ըստ անհրաժեշտության համակարգում կատարվում են փոփոխություններ:

Ընկերությունը 12.12.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ չունի: ***12.12.2018թ. մինչև 14.12.2018թ. ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից պարտավորություններ առաջացնող հաշվարկ-հաշվետվություններ չեն ներկայացվել:***

Ծրագրային խնդրով պայմանավորված «Էսկուլապ» ՍՊԸ-ի ԱՀՔ-ում եղել են անճշտություններ և 21.12.2018թ. կազմակերպության ԱՀՔ-ում կատարվել է վերահաշվարկ և պարտավորությունները համապատասխանեցվել են Հարկային օրենսգրքով սահմանված դրույթներին, հետևաբար ***14.12.2018թ. դրությամբ վերահաշվարկի արդյունքները Ընկերությանը չէին կարող տեսանելի լինել:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 02.02.2019թ. թիվ 6-2/7331-19 գրությունը, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել և չէր կարող տեղյակ լինել նման պարտավորության մասին, քանի որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրված հարկային պարտավորությունը առաջացել է դեկտեմբերի 21-ից հետո՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից Ընկերության ԱՀՔ-ում կատարված վերահաշվարկների և պարտավորությունները Հարկային օրենսգրքով սահմանված դրույթներին համապատասխանեցնելուց հետո, և նշված պարտքը տեսանելի չէր կարող լինել Ընկերության համար, գտնում եմ, որ Ընկերությունը «Թ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂԱՏՈՒՆ-2019» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.01.2019թ. թիվ 27/26-3/1293-19 գրությամբ «Էսկուլապ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ